



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5835 (2f)

23502 -

23504 (3f)

5211 (7f)

8073-8075
(9f)

929

5-96

8073(9F)

92 [Պշտութեան] ԵՐԶԵՆԵԿԸՆ

Ի ԲԱՐԵՅԻՇԱՏԱԿ

ԵՐԶԻԹՊԵՏԻ ԵՒ ԳԵՐԹՊԵՅԾՆՈՒՏԻՐ

ՄԻՔԵՅԻՒ ՎԵՐԴԵՊԵՏ
ԵՂԻՔՍԸՆԴՐԵԸՆ


ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՐՈՒՍԱԶԵՄԻ

ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱԿԱՆ ԻՈՐԿՐԻԱԿԱՆ

ՎԱԽՃԱՆԵԱԼ Ի ՀԱՍՍԱԿԻ 45 ԱՄԱՑ

Ի ԳԵՂԱԿԵՂՈՆ Ի 28 ՅՈՒՂԻՍԻ 1865

Տպարանի տնօրէն Գ.



ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻԻՀԵՆՏԻՍԵԱՆ

1865

Աստուած փառաւորեալ է ՚ի խոր-
հուրդս սրբոց իւրոց, մեծ եւ ա-
հուար ՚ի քերայ այնոցն ՚որք շուրջ
են ցեղաւ : Սճ :

Միայն Աստուած է մեծ ո՛ր Հաւատացեալ Աղբարք,
և ինչպէս երկիւղախառն հիացմամբ չքսեմ այս ամենա-
կարևոր ճշմարտութիւնը, երբ Աստուծոյ մեծութիւ-
նը կը նկատեմ ո՛չ միայն իրեն արարչագործ ձեռին ըս-
քանչեւեացը մէջ, հապա նոյն իսկ մարդուս ունայնու-
թեանը, անոր խաւար գերեզմանին արհաւրացը, անոր
ոսկերացը տխուր մնացորդներուն վրայ : Այլ ինչ է այդ
մարդը, բայց եթէ անմահի մը շունչէն ստեղծուած՝
երկրաւոր ունայնութեանց մէջ թափառող խեղճ պան-
գուխտ մը, որ կարծես թէ ուրիշ բանի մը համար չե-
րենար այս ողորմելի տեսարանին մէջ, բայց եթէ իրեն
համար գերեզման մը փնտռելու, ոյն միակ ժառան-
գութիւնը՝ ցաւօք և յեծութեամբ լեցուն աշխարհի
մը մէջ. ուր կը խորտակին փառք, կուռայնանան մե-
ծութիւնք, կը սասանին իշխանութիւնք :

Ո՛հ, ի՛նչ տխուր վախճան պիտի ունենար նաև բը-
րխտոնէի մը կեանքը, թէ որ հեթանոս ու անմիտ ի-
մաստասիրութեան անգէտ բանդադուշանաց հետ, այն
գերեզմանին քով դներ անոր վախճանը, այն մոռացկոտ
մթութեան մէջ թաղել ստիպուեր անոր գործքերը, և
մէն առաքինութեանց արդիւնքները, և անոր անմահ
կեանքը գերեզմանէն ասդին փնտռեր, չուզենար վեր-
ցնել իր լուսաւոր հաւատոյ աչունները այս տխուր բը-
նակութենէն ալ անդին. անոր թանձր ստուերացը մէջ
կենդանարար լցս մը փնտռեր, անոր շղթայակալ գե-
րութեանը մէջ աղատութեան յոյս մը, ու այն մահ
ուան աղետալի յարկը՝ պատուանդան մը ճանչնար վե-
րելից յանմահութեան :

Այ՛ն Աղբարք, մահը՝ որուն առջև կը սասանի ան-
հաւատը, որուն առջին ճշմարտութեան լուսէն զըր-
կուածը անիւ կը խուճապի. յուսալից և լուսեղէն դա-
ւառ մը նէ ճշմարիտ բրիստոնէի մը համար, և այն շիր-
մին վրայ՝ զոր յուսահատ կողողէ յաւիտենականու-
թենէ անցոյս սիրտ մը, հոն պիտի գաղբի բրիստոնէի
մը առատ արցունքները, վասն զի հոն պիտի լմնայ իր

480
510



մահը, և հոն պիտի սկսի իր անմահութիւնը « զի փոխեցաւ ՚ի մահուանէ ՚ի կեանս » :

Մի սպասէք ուրեմն ինձմէ, քրիստոնեայ ժողովուրդք, որ յորդորեմ՝ զձեզ առատ արցունքներ թափելու այն շիրմին վրայ՝ որ այսօր պիտի ներկայացնեմ՝ ձեր աչքին այն հոյակապ Անձին վրայ՝ որ փառօք կատարեց իր ընթացքը մահուան ու մոռացութեան անցաւոր աշխարհի մը մէջ, ու իր անմահ առաքինութեանց և լաւութեանցը անմոռաց յիշատակ մը տը պաւորեց մեր սրտին մէջ, որուն համար այս վերջին մեծարանքն ալ կրնուինի այսօր մեղմէ :

Անուշա, կը յիշէք ամէնքնիդ ալ Այս մեծ ու նուիրական անձը, զՄիքայէլ Աբբեպիսկոպոս Արուսաղէմի, Ա իբանանու Աթուոյն պարծանքը, ու անոր գլխաւոր յուսոյ նեցուկը, որ եկաւ երեցաւ մեր մէջը, ու քիչ օրուան մէջ անհետացաւ մեղմէ :

Յիրաւի սակաւօրեայ եղաւ իր կեանց ընթացքը մեզի, յաւէտ իր անմիտութար Միաբանութեանը, սա կայն առաքինւոյն կեանքը իր արդեանց մեծութեամբը և առատութեամբը կը չափէ Աստուած « կատարեալն ՚ի սակաւուց ելից զժամանակս երկայնս » : Ա՛սժամանակն և անմահ բարձրեալ որ ծիծաղելով կը նայի մեր տարիներուն թուոցը վրայ, փայրկենի մը մէջ գործուած իրեն արժանի գործոցը՝ ակորժ ու սիրալիք աչք մը կը դարձնէ, զուարթ աչք մը կը դարձնէ այն առաքինւոյն վրայ՝ որ մահ շնչող, մահուան արհաւիրք ազդող աշխարհի մը կրից և յուզմանցը մէջ, ու անոնց աւերակաց և ածիւնացեալ մոխրոցը մէջ՝ իբրև նորափետուր փիւնիկ մը ինչուան առ Աստուած կը բարձրանայ :

Ահաւասիկ այսպիսի բարձրութեան փափաքեցաւ պանչելին Միքայէլ, ու այս Աստուածատուր փափաքը իր անտիական ու տխրոճ հասակէն զարմանալի կերպով մը երեցուց իր վրայ : Արեցաւ այս աշխարհիս մէջ, բայց իբրև պանդուխտ մը, որ միշտ կարօտ կը քաշէ իր անձկալի հայրենեացը, իբրև նոր խորայէլ մը՝ որ Վաբելոնի անպտուղ ու ցամաքեալ ուռեաց անտուեր հովանեացը տակ աչքով ու սրտով, արցունքով ու հառաչանքներով զՄիտն կը փնտռեր : Չեր ուղեր աշխարհի մօտենալ երբէք, ուրկից շատ հեռու էր սրտովը,

այլ առ Մատուած մերձենալ ու իր մանկութիւնը սիրող, և իրեն սիրոյն համար չարչարուող ու մեռնող Յիսուսին հետ անբախտելի սիրով կապուել, այն քաղցր ու մխիթարական կապանքով՝ որ երկնաւոր ազատութիւն մը կը պարգևէն մարդուս :

Իր սրտին այս փափաքանացը խրախուսելչ դատու այն Մատուածապատիւ Մնձր՝ որուն խնամնցը ու փութոցն պարտրկան է այսօր Կիլիկիոյ Սեծ աթոռը, ու անոք ընդարձակ միջակը զՂրբիգոր Ը. որ այն ատեն տեսուչ էր Կեսարիոյ Արքեպիսկոպոսական Աթոռոյն, ու Մատուոց փառացը և հոգւոց փրկութեան նախանձուն մէջ հինցած, կը փափաքէր իր սրտին և հոգւոյն եռանդեանը համեմատ ժառանգներ երեցնել Տերունեան անդաստանին մէջ, ուր կարծես թէ հոգւոյն աչքովք հնձոց բազմութեան հետ Մշակաց սակաւութիւնն ալ նկատեր էր :

Փութացոց զՍիրայէլ սցնպիսի տեղ մը՝ ուր հարածանաց վախը, ու հոգւոց փրկութեան եռանդը՝ ցանկալի սրբափայր մը բրած էր Սիրանանու անմատոց լեռանց գլուխը՝ աշխարհքէ հեռու. հոն ուղեց զաշխարհք բոլորովին մոռանալ, հոն փնտռել իր ու այլոց հոգւոյն փրկութիւնը, հոն Սուրբ կուսին նուիրած մենարանին մէջ ուղեց ինքզինքը բոլորապառուղ նուիրել անոր՝ որ Սոսր է Մատուոց և մարդկան, ու մեղքով կորսուած երկինք մը, անոր անմեղ գրկացը մէջ փնտռել :

ՄՏ որչափ կը խաբուի աշխարհք, երբ այսպիսի նուիրմանց վրաց, անտարբեր աչքով մը նայելով, չուղեր տեսնել անոր մէջ այն երկնասլաց հոգին, որ միայն Մատուոմէ կը պարգևի, երբոր մեղաց հաճոյից ու գրգանաց ընդարձակ և լայն ճամբաներէ յափշտակելով բղմարդ, սուրբ Մշտարանին նեղ անձուկ ու զրկման ճամբաներուն մէջ դնելով՝ որ միայն կառաջնորդէն ի փրկութիւն : Մյս Նդբարբ անկարելի է աշխարհքի հրապուրանաց շղթաները խորտակել մինչև որ այն ուժը երկինքէն չհասնի, անկարելի է մարմնոյ ու հաճոյից հետ պատեքազմիլ, ու յաղթութեան պտակը ժառանգել ինչուան որ այն զէնքերը Մատուոմէ մեղի չի տրուի :

Մյս մեծ ու ահաւոր սրտերազմին, ու յաղթութեան ինքզինքը սքոբառտեց Սիրայէլ, այն երկար

տարիներուն մէջ միաբանական կենաց խաղաղ ու սիրելի առանձնութեանը մէջ, իր աչքին առջև միակ նպատակ դրած էր զՄատուած, անոր համար Ատուածմէ դատ ամենէն բան մտօցած էր, մտօցած ինքզինքը երբ փուճ տեղը աշխարհք իրեն ձայն կուտար խաբուսիկ սրատրանացը մէջ ձգելու, մտօցած ինքզինքը երբ բնութիւնը կարթննար, ու կը ջանար անոր սրտին մէջ ապաւանիչ կրկն սրատերազմը արթնցնել. Վովոյս պէս ահա բեկ ու սարսափած ելեր հեռացեր էր աշխարհքէ, կը վախնար որ չըլլայ թէ մէյմալ աչուները հոն դարձնէ. ուր միայն մահուան մը արհաւիրք իրեն կը սպասէին: Անոր համար այդ հոգւոյ մահը կորակոր հեռացաւ անկէ, որ միայն հոգւոյն կեանքը կը փնտռեր:

Հասաւ վերջապէս Սիբայէլի այն փոփաբելի ժամը՝ որ իր հոգին նուիրէ անոր՝ որ ինքզինքը ուզեց բողբոջ վն իրեն տալ. նուիրէ այն սեղանոյն ուր անմահ մը մահկանացուաց համար գերագոյն ողջակէզմը եղաւ սիրոյ:

Մորչափ մեծ է այս արժանապատուութիւնը մարդկային բնութեան համար . . . և սակայն որչափ առիթ դատապարտութեան անոնց՝ որ կը դիմեն կեղէն այս սուրբ ու նուիրական սեղանը, ու կորսոյ և անոնց բնկերացը հետ Ատուածոյ սեղանէն ու Տաճարէն դուրս կրակ կը փնտռեն Ատուածոյ խուռնի մատուցանելու համար, որ զաշխարհք ու աշխարհքիս կրքերը կը բերեն կը դիզեն բարձրելոյն տանը մէջ:

Եւ սակայն Սիբայէլ շատ աւելի ճանչցաւ նուիրուած պաշտաման գերազանցութիւնը ու ծանրութիւնը, անոր համար իր տարտուց մեծութիւնն ալ, վասն զի աղէկ գիտցաւ թէ որչափ աւելի մօտ է մարդս Ատուածոյ, այնչափ աւելի պէտք է հեռանալ աշխարհքէ: Այսպիսի Հաշխարհիկ վարքովը ամենեւեւ սերը ու համարումը իր վրայ դարձուց, զարմանալի էր իւր Սիաբանիցը ու անոնց ամենեւեւ օրինակ բարւոյ մեծարու և սիրելի, Մթուոյն և ժողովրդեան բարւոյն համար հնդկաց հեռաւոր սահմանները կը պանդխտեր, շատ տարիներ Աթուղիկոսական Վանադպրութեան ծանր պաշտօնը վրան առած իր գլխոյն եղբարցը ու բոլոր հօտին ծանրութիւնը կը թեթեւցներ:

Եւ թիչ զարմանք, երբ ստոյգ արդեանց և արժա-

նեաց հետ նաև երկրաւոր պատիւներն ալ միաբան ըն-
 թանան : Յիրաւի Սեբասէլ հոգեւոր վաստակոց ճանա-
 պարհին մէջ երկրաւոր փառք մը փնտռելէն շատ հե-
 ուռ էր . սակայն Մտուածապատիւ Կաթուղիկոսին դի-
 տող աչքէն չէին կրնար վրիպել , այդ գորովալից հա-
 սարակաց հայրը չէր կրնար հանդուրժել որ միայն երկ-
 նից մէջ ամբարուխն իւր ամենասիրելի որդւոյն փառ-
 քը , միայն Հրեշտակք և Սրբոց դասք բոլորեն այն
 պատկները որոնց արժանի էր , ուղեց այո՛ ուղեց ինքն
 ալ վարձատրել զՍեբասէլ , ու ցըցունել բոլոր աշխար-
 հի , ցուցնել իր որդւոցը՝ թէ երկրաւոր պատկք ան ա-
 տեն առ հաւատացեաց են երկնաւորաց երբ սոյոգ ար-
 ժանեաց արդիւնք ըլլան : Կնոր համար չվախցաւ անոր
 երիտասարդ հասակէն , չանսաց երբէք անոր խոնարհա-
 միտ թախանձանաց ու պաղատանացը , միմիայն իւր
 սրտին զգացմանը , և Հոգւոյն սրբոյ կոչմանը , միայն
 անոր արգասաւոր արդեանցը անսալով , բարձրացոյց
 զանի Երուսաղէմի արքեպիսկոպոսութեան Ըթուր :

Թէ որ պաշտաման մեծութիւնը միայն ան ստեն
 արդիւնաւոր էր , երբ գործոց և արդեանց հետ զու-
 դընթաց ըլլար , սլ աւելի երկնահրաւեր մեծութիւն
 մը այս արդիւնքը կը պահանջէ , ո՛ հաւատացեալ եղ-
 բարք : Հովուական գաւազանը Սովսէսի ձեռաց ցու-
 պը պիտի ըլլայ՝ զոր ժողովրդեան բարւոյն համար կը
 յանձնէ Մտուած անոնց ձեռքը , զորս մարդկութեան
 հասարակաց պայմանէն վեր կը բարձրացնէ : Կնոնց առ-
 ջև թէ որ համարձակին մունչել հոլմունք , ու կրից և
 մեղաց պիքները բարձրացնելով , իրենց խնամոցը յանձ-
 նուած ժողովրդեան տխուր ու անդնդատոյզ մահ մը
 սպառնան , այն Մտուածասաստ գաւազանին ուժը
 այնպիսի բռնութիւնները խորտակէ , և անոնց խորոցը
 մէջէն համարձակ ու անարգել ճամբայ մը բանայ առաջ
 նորդերու առ Մտուած , կամ երբ դժոխոց անդուն-
 դէն ելած մութ մը , մորութեանց անգիտութեանը
 մէջ ուղեկոյ գանդաղեցնել լուսոյ համար եղած բազ-
 մութիւն մը , այն թանձր խաւարին մէջէն սքանչելի
 ըլլա մը ջահել անոնց վրայ . անոնց սովալըուկ տաղնա-
 պին մէջ երկինքէն հաց ու բարերէն ջուր բխեցնել :

Արիկայ է ճշմարիտ հովուի մը նկարագիրը , այն
 հովուին որ Քրիստոսի Մտուածոյին լեզուով « զան-

ձրն իւր դնէ 'ի վերայ ոչխարաց », իր նեղութեանը մէջ ժողովրդեան հանգիստը կը փնտռէ, իր աղքատութեան մէջ այլոց դիւրութիւնը, և ինչուան իր մահուանը մէջ անոնց կեանքը : Աւ թէ որ Սիրայէլ իր հովուական աստիճանին բարձրութեանը մէջ ընդունենցաւ իրեն յատուկ ժողովուրդ մը, սակայն կաթուղի կոսական բոլոր ընդարձակ վիճակին շատը իւր անդադար խնամոցը և հսկողութեանը նուիրուած էր, երբ աննախանձ սրտով առատաբաշխ կը մատակարարէր իւր եղբայրակից Ալփիսիպոսացը իր ընդարձակ տեսութիւնները, խոհական խորհուրդները ու կարող օգնականութիւնները, թէպէտ սակաւաթիւ էին այն աչքերը՝ որ իր կանխաժամ մահը լացին Աբուսադէմի վիճակին մէջ, սակայն առատ նուիրեցին անոր իրենց արցունքը Սիրիտինէ, Իերիա, Վամպուտ, Լ'նտիոք, Վերմանիկէ, Տիգրանակերտ Սեփասաիա և Աւդոկիա, վասն զի ամեն տեղ հասած իր ցանկալի համբաւը, և անուանը հետ արգիւնքն ալ, ս'հ ամենքը հաւասար բացին անոր մահը՝ այն մահը՝ որ Քրիստոսի ընդարձակ թագաւսրութեանը մէջ տխուր ու ցաւագին յիշատակ մը ձգեց, որովհետև անոր կեանքին երկարութեանը մէջ Տերունեան յաղթանակոց առաւելութիւն, ու արդասեօք լեցուն առատութիւն մը կը գուշակուէր :

Վիտէք Հաւատացեալ եղբարք, թէ ինչ մեծ ու նշանաւոր կերպարանափոխութիւն մը երևցուց Աստուած այսպիսի հաւատոց ցամաքութեան ու անտարբերութեան առէն, այսպիսի վարուց ու բարուց ապականութեան մէջ, ու այս միսիթարութիւնը մեր օրերուն ու մեր սրտերուն պահեց : Վարձուցէք աշունիգ այն հանուրց հիւսիսականաց վեհագոյն, մեր ցանկալի հայրենեացը վրայ՝ ուսկից հեռու աչքով, բայց մտենք սրտով, ու տեսնէք թէ ինչպէս Աստուած գթած աչքով մը կը նայի անոր վրայ, իր երկնաւոր այցելութեանց հրաշալի հանդէսները աւելի կերպով մը պիտի նկատէք հոն, ուր դառնապէս շնչեր են մոլորաշունչ հողմներ ատելութեան ու ագիտութեան, այն Հովուական սրնգին քաղցր ձայնը՝ զոր ընդ բախանդակ Հայաստան հնչեցուց Վրիգորիոս, նորէն կը լուծի 'ի Վերմանիկ 'ի Սիրիտինէ և Ալթեսիա և այլն և այլն, ցամբած ու անպտուղ տրօսներու վրայ թափառական

ուչխարները իրարու ձայն կուտան, զերար կը խրախուռ-
ունն մտնելու այն փարախին մէջ, ուր միայն է փրկու-
թիւն, և ճանչնալու այն բարերար հովուին ձայնը որ
միայն հովիւ է ոչխարաց :

Այս հրաշարի այցելութեան, ու զարմանալի փոփո-
խութեան աւետիսը՝ Միմէնի ուրախութեան արցունք-
քը, ծերունի Հօտապետին ալ աչուներուն մէջ արթնե-
ցուց :

Սակայն այսպիսի սքանչելի կերպարանափոխութիւն-
ները յետին աշխատանքներու ասպարեզ մը էին առ-
ջին, հարկ էր անհրաժեշտ Աստուծոյ գթութեամբը
պատրաստուած հնձոց համար աւետարանական մը-
շակներ բազմացնել, հարկ էր անոնց հոգևոր ու թրշ-
ուառ մարմնաւոր պիտոյքն ալ հոգալու մտմտութներով
արդէն իւր պարտասեալ գլուխը ու միտքը ծանրացնել :

Ի այց ասոր մէջ ալ իրեն օգնական հասաւ Միքայէլ
Լչպիսիոպոսն օգնեց զարմանալի անձնանուիրութեամբ
օգնեց լայն և ընդարձակ հմտութեամբը, ու իմաս-
տուն խորհուրդներովը, օգնեց երկար ու տաժանելի
ճանապարհորդութիւններով, բարեպաշտ հաւատացե-
լոց դիմեց, ինչուան Վարդիոյ ու Աւստրիոյ մեծազօր
կայսերաց գութը ու խնամքը արթնցուց այն մոռցը-
ված արևելքին հեռաւոր ու թշուառ Հայաստանին
որդւոցը վրայ, Նոր խրախոյս ու յուսալից ապագայ
մը ազդեց իրեն, երբ իր հոգեւանդն ու աննախանձ
սրտովը՝ Լիկեղեցւոյ ուխտին համամիտ սիրոյն ու միու-
թեանը մէջ, տեսաւ Աստուծոյ փառքը ու անոր ժո-
ղովրդեան միակ օգուտը, և այն քրիստոսաւանդ սի-
րոյն ճշմարիտ նշանը ցրցուց ամեն տեղ ուր ինքը երևե-
ցաւ, ցրցուց ոչ միայն Վիբանանու նուիրական ապա-
գայիցը վրայ, այլ ընդ Լէրոպա համօրէն, ուր գեղե-
ցիկ մսիթարութեամբ տեսաւ իրեն սրտին նման սրբ-
տեք Աստուծոյ ու Հայրենեաց սիրովը վառուած :

Իր այս փափաքները աւելի արդիւնացնելու հա-
մար, եկաւ երեցաւ նաև մեր մէջ, երեցաւ քրիստո-
նէից ու Հայ ազգին անունը սիրելի ու զարմանալի ը-
նող Վիբանանու Բարձրապատիւ կուսակալի մը հետ,
որպէս զի ալ աւելի ազդեցութիւն մը ունենայ իր բա-
րի նպատակներուն հասնելու, և անոր միջնորդու-
թեամբը միջամուխ ըլլալու ամեն փափաքանացը որուն

համար այն վտանգալից ճանապարհորդութիւնը ըրած էր ինքը . բայց աւանդ, վրիպեց բարեգութն Աստուած այն հինաւուրց բաղձանքներէն զինքը՝ երևցաւ հոս ամսօրեայ ժամանակ, և հաղիւ իւր սիրելի մօրաքեռ Որդւոյն Սեծապատիւ Թէրձանեան Յարութիւն Ազային ամէն կտրելի խնամքները, ու անոր կարօտալից սէրը կը վայելէր՝ անակնկալ մահուամբ կամեցաւ Աստուած վարձատրել անոր առաքինի կեանքը, անմուսաց յիշատակ մը տպաւորելով մեր սրտին մէջ :

Բարէ՛ որչափ սակաւօրեայ ընթացք մը եղաւ անոր կենաց ասպարեզը և ինչպէս այն առոյգ հասակը ատենէն յառաջ խամբեցաւ Թարչամեցաւ մահուան անգութ մանդաղին առջև, որչափ բարի բարի ակնկալութեանց առհաւատչեայ էր անոր երկար կեանքը, ո՛հ ուրեմն այն ամէն յոյսերը անհետացան իրեն համար բացուած գերեզմանին հետ, ընդարձակ վիճակ մը որ բացաւ իր սիրելի Հօրմէն, Հոյակապ աթոռ մը զըրկուեցաւ անոր լուսաւոր խորհուրդներէն, ամբողջ հօտ մը մեծ օգնականութիւն կորսնցուց, որչափ աւելի մեծ էր իր կարօտութիւնը մեզի, այնչափ պակաս էր և անսահման անոր կորստեան ցաւը և արտասուքը :

Բայց չէ՛ սիրելիք իմ պէտք է որ Քրիստոսի Տեառն մերոյ անսուտ խոստմամբը մխիթարուինք, յիրաւի մահը զրկեց զմեզ մարմնաւոր տեսութեանէն անոր, բայց կենդանի է անի և անմահ ցյաւխտեան, բաժնուեցաւ այո՛ մեզմէ շատ քիչ ժամանակի մը համար, բայց Աստուծոյ ընդարձակ Թագաւորութեանը մէջ նորէն հանդիպելու յուսով, բաժնուեցաւ անշուշտ, բայց անանց և անվախճան լուսոյ մէջ նորէն զմեզ գրբկախառն սիրով ողջունելու :

Ալեիլեյ-ոջ Անաստորբ Երրորդութեան

1865 ՚ի 28 նոյեմբերի .

Վ. Վ. ՃԻՉՄԻՃԵԱՆ





